



## ՊԱՇՏՕՆԱԿԱԼԻ

**ԳԵՂՐԳ. ՇԱԽԱՅ ՑԵՍԱԽԵՄ ՔՐԻՍՏՈՆԵՒԹԵԿ ԱՆՀԱ-  
ՍՏԱԲԵԼԻ ԿԱՄՈՅԻ ԱԿՈՒՋՈ ԵՎԳԻՆԻԿՈՎՈՎՈՎԵՏ ԵՎ Կարու-  
ղիկոս Ավետինյի Հայոց Ծայրագոյն Պատրիարք Համազգա-  
կան Նախամեծար Արքույ Առարատեան Առավելական  
Մայր Եկեղեցւոյ Արքոյ Կարուղիկէ Եջմիածնի**

Բարեհան անդամոց Գլխաւոր Կարպաղիք Յանձնաժո-  
ղովոյ Եղբայրական Օգնութեան Մ. Էջմիածնի՝ Ներկայա-  
ցուցչաց Յանձնաժողովոյ Մ. Աթոռոյ գերապատիւ Բազ-  
րար և Մատթեոս Եղիսկոպոսաց, բարձրապատիւ Գարեգին  
և Բարգևն վարդապետաց, Ներկայացուցչաց Յանձնաժո-  
ղովոյ Եղբայրական Օգնութեան Երևանայ՝ գերապատիւ-  
յորէն Եղիսկոպոսի, մեծարգոյ պարոնայց Ատահը Եղիս-  
գորեանի, Գրիգորի Տէր Խաչատրեան և Արշակայ Զիլին-  
կարեան, Ներկայացուցչաց Կենդրունական Յանձնաժողովոյ  
Թիֆլիսի, Կովկասեան Բարեգործական, Հայ Նպաստա-  
մատոյց և Գիւղատնաեւական Ընկերութեանց և Յանձնա-

ժողովոյ ծխական Հոգարարձութեանց և Հոգեորականաց Թիֆլիսի՝ մեծարդոյ պ. Յովանինի Սաղաթելեան և Թօդոսի Կանոնութեան, ներկայացուցչի Յանձնամուկոյ Յանձնամուկոյ Հայոց, Մարդասիրական Ընկերութեան և Կուլտուրական Միութեան Բազուայ՝ մեծարդոյ պ. Գայուրիէլի Պատվեան, ներկայացուցչի Յանձնամուկոյ, Բարեգործական Ընկերութեան և Եկեղեցական Հոգարարձութեան Հայոց Նորոյ-Նախիջևանի՝ մեծարդոյ պ. բժշկի Անորեանց Սալֆիկեան, ներկայացուցչի Յանձնամուկոյ Հայոց Պետրովրադի՝ մեծարդոյ պ. Գեորգի Ամիրեան, հարազատ որդուոց Մայր Աթոռոյու ողջոյն և օրհնութիւն Հայրապետական:

Առկալի փորձութիւնը և արհաւիրք մեծամեծք կուտակեցան ի վերայ Հայաստանի և Ազգին Հայոց, Հրոսակախումբք թշնամեաց կատաղաբար ասպատակեն և կործանեն զշէն զիւղօրայս և զբազարս Հայոց, զամենայնինչ սրոյ և հրոյ ճարակ տոնելով. անողթարաը կոսորեն և խողխողեն զանգէն և զանօղնական զաւակունս մեր, որբաղդելով զազդային-կրօնական և զբնատնեկան սրբոթիւնս Հայոց:

Իսկ ի վերջին առուրս հաստատամբէս տեղեկացաք, զի, ըստ կարգադրութեան Տաճիկ կառավարութեան, ի ձեռն յատակ Յանձնամուկովոց, ամենայն բանութեամբ տարագիր լինին հազարաւոր բնատնիք Հայոց ի Հայրենեաց իւրեանց ի հեռաւոր և յանապահով վայրս, իսկ զկալուածս և զոււնո նոցս բաշխուն մահմեղականաց. Հոգեկան ամենանօք տեսանեմբ, զի բազմաթիւ եկեղեցիք և վանօրայք հայոց, պատմական յիշաստակարսնիք և դպրոցք մեր աւերեալ և հրկիզեալ եղեն ի ձեռաց անզութ թշնամեաց. Եւ այսօր բիւրաւոր որբք և այրիք, անօղնական կանայք և մանկունք հայոց, հիւսնողք և քաղցեալք ի յուսահատ վիճակի զոշեն յարիւնաներկ Հայրենեաց՝ ի Հայաստան աշխարհէ, առ ամենայն զիտակից ազդայինս մեր և առ բարեսէր անձինս, ցուցազրելով զբարոյական և զնիւթական վերս իւրեանց. Դժբախտ զաւակունք մեր, որոշմամբ Տաճիկ կառավարութեան զրկեալք յամենայնընչից և ի ստացուածոց

իւրեանց, մինչ իսկ յիբաւանց զոյտթեան, խնդրեն և աղերան գութեալ հասանել յօդութիւն և փրկել զնոսու ի ձեռոց տանջանց և մահու:

Զայսոսիկ դաւնադէտ հանդամանս առաջի աշաց ունելով, ի լրութե Հայրապետական Կոնդակաց մերոց ի 28 դեկտեմբերի անցելոյ 1914 ամի ընդ համարաւ 1990 և ի 21 մարտի տարւոյ ընդ համարաւ 462, այսու Կոնդակաց յանձնարարեմք Զեզ՝ անդամացդ Գլխաւոր Կարդադիր Յանձնաժողով, շարունակել ամենայն եռանդեամբ և անձնութրութեամբ զմարդաւէր զործունեւթիւն Յանձնաժողովոյդ, որ ընդ անմիջական հակողութեամբ և հովանուորութեամբ մերով, արդարացույանելով զվատահութիւն և զյոյս մեր և ամենայն ընտրուզաց Զերոց: Պատուէր տամք Զեզ, որդեակը սիրելիք, որպէս ցարդ նոյնպէս և յետ այսորիկ, բանալ ի քաղաքս և ի կենդրանական վայրս Հայաստանի զհիւանդանոց և զրուժարանս, կազմակերպելով զրժշկական-առողջապահական օպերութիւնս, հիմնել զմննդատու կայանս վասն կերակրելոյ զփախստական-զաղթականս, զթշուառս և զտառապեալս, կազմակերպել յանձնայն տեղիս Հայաստանի զզործ Եղբայրական Օգնութեան ի ձեռն տեղական Յանձնաժողովոց և կարող ներկայացուցչաց: Անրադաւանել զզազթական-զփախստական ի հայրենիս իւրեանց ի ուշաւ ապահովութեան, նորոգելով անդ զդիւզօրայս և զքայքայեալ անտեսութիւնս նոցաւ:

Յուսամք, զի Գլխաւոր Յանձնաժողովդ, որպէս զեկույար մարմին, ժողովելով զամենայն տեղեկութիւնս և ստանալով յամենայն Յանձնաժողովոց և ի կազմակերպութեանց զտեղեկազիրս և զտառջարելութիւնս, միաւորեսց զզործունեւթիւնս ամենայն կողմանց յօդուու ժողովրդեան մերոց:

Եխայոյս եմք և հաւատամք, զի հոգեոր և սիրելի որդիք մեր, որպէս ցարդ նոյնպէս և յետ այսորիկ, ի նկատ տեեալ զանչով պահանջու և զբազմազիմի կարիս Հայոց Դաստիարականի, Մանազկերտի, Ալաշկերտի, Բասենի,

Բաղեշի, Տարոնայ և այլ վայրեաց Հայուստանի, օդնեացին լիտուան նուիրատութեամբ իւրեանց յօդուա և խսփովումն տարարախտ և բազմաչարշար որդւոց մերոց, որք այսօր ի գժոխային պայմանա անցուցանեն զաւուր իւրեանց:

Օքնեմը զջեզ, մաղթելով ի Տեռնէ կայր և զօրոթիւն վասն ի կատար ածելոյ ամենայն որբոթեամբ զրարոյական և զազգային պարտիս զեր:

Ողջ լերուք, զօրացեալ շնորհօր Ա. Հոգույն և յաւեա օրհնեալ ի մէնջ. Ամէն.

Առողջ. Գ. Ե. Ա. Պ. Գ. Ե.

Կ. Ա. Թ. Ո. Ե. Դ. Կ. Ա. Ա. Մ. Ե. Ն. Ա. Ց. Ա. Զ. Ա. Զ. Ա. Զ. Ա. Զ.

Ի 10 Յուլիսի 1915 ամի:

Էստ Տամարիս ՌՅԱԴ.

ի Հայրապետութեան Մերում Վ. ամի  
յԱրարատեան Մայր Աթոռ Ա. Էջմիածնի

ի Վաղարշապատ.

ռ. 1169.

ՆՈՐԻՆ ՎԵՀՇՓԵՌՈՒԹԵԱՆ Տ. Տ. ԳԵՂՋ. Ե-ՐԴ  
ԱՐԲՉԱՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒԳԻՒՅՈՒ ԲԵՐՉՈ ՀՈՎԱՆԻԿՈՒՐՈՒ-  
ԹԵԱՆ ԷԿ ԲՆԱՄԻԶԱԿԱՆ ՀՍԽՈՂՈՒԹԵԱՆ ՆԵՐԵՈՅ  
Դ-ՑՆՈՒՈՂ.

Ա. ԷԶՄԻԱՆԻ ԵՂԲԱՑՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԵԱՆ  
ԳԼԽԱԿԱՐ ԿԱՐԳԱԴԻՐ ՅԱՆՉԱԾՈՂՈՎԻՑԻ  
ԿՈՉ ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ

Դանաղետ, սուկալի լուրեր եկան Մայր Հայուստա-  
նից նորանոր կատարձների, սարսափների և աղետների  
մասին, որոնց ենթակայ է եղել Բաղեշի, Մուշի, Վանի  
շրջանի, Արճեշի, Ախուաթի, Ալշելազի, Պատնոսի, Լիզի,  
Կոփի, Մանազկերտի հայ ժողովուրդը:

Եւ իրեն հետեանք այդ սոսկալի աղեաների առելքը բան 50,000 հայ վախսատականներ՝ մերկ, բոկոտն, անօթի, հիւանդոտ, հիւծուած և մաշուած հետզհետէ գալիս թափուած են Արարատան զաշոր, աղիւոդորմ օվանթիւն հայցելով Խուսահայ եղբայրներից։ Այդ 50,000 թշուառների մեծագոյն մասը՝ կանայք, երեխաներ, որրեր, ծերունիներ են։ Կրանց կերակրող ապրոք՝ աղամարդիկ մեծ մասամբ կոտորուած են, զո՞ւ զնալով անգամ քորդի, թուրքի զաշոյնին և հրացանին։

Դուժարեր հեռազիրներ ևս ստացուեցին, որ ամբողջ Վասպուրականի հայութիւնը նոյնպէս շարժուած է դեղի մեր կողմերը մօտ 120,000 հոգի։ Աղեան անհնկարութելի է և աներեակայելի։

Հայտառանուամ ամեն առել մահ է սփռուած։ զաշակարը լճացած են հայի արիւնով և ծածկուած հազարաւոր հայի յաշուուած դիսեներով։

Մեր նուիրական պարաբն է օգնել, խնամելի Հայութեան այդ մերացորդը, որ խելակարոյս գալիս է ապաւինելու մեր զթութեան և կոչ է սնուած մեզ՝ օվանթեան ձեռք կարկառել, օգնել անուուն, անուէր, անօգնուկան մեր թշուառ հայ եղբայրներին և քոյրերին։

Ա՞զ կարող է, ով սիրու կունենայ անուշաղիր թողնել, արձադանը չը տալ այդ աղեխարշ կոչին և անցնել անտարբեր այդ համազգային մեծ դժբախտութեան մօտով։

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՎԵՀԱՓԱԾԻ ԿՈԹՈՒԿՂԻՇԻՌԸ,** ի նկատի ունենալով իր հօտի սոսկալի ստուպաները, վիւթաց իր Հայրապետական Պոնդակով սպառուիրել իր բարձր հովանաւորութեան ներքոյ զանուող Եղբայրական Օգնութեան Գլխաւոր Կարգադիր Յանձնաժողովին հիմնել աննօդատու կայանեներ, ճաշարաններ՝ խնամելու, պատսպարելու դժբախտ վախսատականներին, բանալ Կոր հիւանդանոցներ, բուժարաններ։ Եւ Յանձնաժողովս, յուլիսի 18-ին կայացած իր արտակարգ նիստում, լսելով Հայրապետական Կոնդակը, լսելով ձեռնիստ անձանց զեկուցումներն ու ստացուած հեռազիրները նոր վախսատականների

հոսանքի մասին, որոշեց՝ լայն կերպով կազմակերպել օդնութեան գործը, պատսպարել նորեկ և այսուհետեւ զայլիք փախստականներին Շիրակի, Նոր-Բայտղէտի, Ապարանի և այլ զով շրջաններում և ըստ ամենայնի խնամելով նրանց, ամոքել նրանց զոտն վիշտը և բարոյական ու ֆիզիքական սոսկալի վերքերը:

Յանձնաժողովս հիմք ունի ենթադրելու, որ մի ամբողջ տարի պէտք կը լինի ցոյց տալ թշուռ փախստականներին եղբայրական օդնութիւն, մինչև ոռւսական զէնքի յաղթութիւնը միջոց և հնարաւորութիւն կը տայ վերադարձնել նրանց իրանց օջախները, որոնք նոյնպէս պէտք է վերականգնել:

Յանձնաժողովս կարող է այս ծանր և դժուարին միասնական զյուխ ըերել, եթէ ամբողջ հայ ժողովուրդը, և հոգևորականը, և աշխարհականը, զրամատէրը, վաճառականը, արհեստաորը և ազատ պրօֆեսիայի տէր անձինք, ամեն մի հայ, փութան իրանց լուման ձգել ընդհանուր դանձարանի մէջ, որից պէտք է սփոփել և ամոքել ծանր վշտերն ու վերքերը:

Արդ, ըստ պատուիրանի ազգիս ՎԵՀԱՓԱԾ ՀԱՅՐԱԳԵՏԻ, Յանձնաժողովս կոչ է անում ամրողջ հայ ժողովրդին ազգային բոլոր հաստատութիւններին և կազմակերպութիւններին, մանաւանդ հայ հարուստներին և բարեկեցիկ զատերին՝ զատպել օդնութեան համեմել իրանց զրամական տուառ նուէրներով և փրկել անօդնական մնացոծ տանեակ հազարաւոր որբերի, մանուկների, կանանց և աղջիկների կետնըը:

Նուէրներ պէտք է ուղղել ամենայն Հայոց  
ՎԵՀԱՓԱԾ ԿԱԹՈՒԿԻԿԱՆԻ անունով.

